ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

15.03.2012թ.
163-ի 5

Երեւան քաղաքի Ավան վարչական
շրջանի ղեկավար
պարոն Մանվել Ջավադյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Ջավադյան,

02.03.2012թ.-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էինք Ձեզ՝ խնդրելով տրամադրել “Համալսարանականներ” համատիրության իրավաբանական եւ գործունեության հաշվետվությունները:

Ավան վարչական շրջանից ստացված պատասխան գրությամբ, սակայն, տրամադրված չէր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած տեղեկությունը, այլ նշված էին հարցման բովանդակությունից բացարձակ տարբեր այլ տվյալներ:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել “Համալսարանականներ” համատիրության իրավաբանական եւ գործունեության հաշվետվությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան